Հավելված N 4
Հաստատված է
«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից
2024 թվականի հունիսի 20-ի թիվ 738-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՏԱՌԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Պաշտոնի անվանումը

Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) «Անտառտնտեսություն» մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) անտառպետության անտառապետ:

1.2 Ենթակա և հաշվետու է

Մասնաճյուղի անտառապետն անմիջական ենթակա և հաշվետու է Մասնաճյուղի ղեկավարին և ավագ անտառապետին:

Մասնաճյուղի անտառապետն ենթականեր չունի:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Մասնաճյուղի անտառպետության անտառապետի բացակայության դեպքում նրան փոխարինում է այլ աշխատակից Մասնաճյուղի ղեկավարի միջնորդությամբ՝ Կազմակերպության տնօրենի հրամանի համաձայն:

2.ՊԱՇՏՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1 Աշխատանքի բնույթը՝

2.1.1 անմիջականորեն իրականացնում է անտառպետության ղեկավարումը,

2.1.2 կազմակերպում է անտառպետության անտառմշակույթների, տնկարանների, դպրոց-հողամասերի տեխնիկական ընդունման և գույքագրման աշխատանքները, ամփոփում է ստացված փաստաթղթերը և ներկայացնում Մասնաճյուղի ավագ անտառապետին,

2.1.3 կազմակերպում է հատատեղերի հատկացման, հատումների կազմակերպման, անտառանյութի բացթողնման և հատատեղերի տեղազննման աշխատանքները,

2.1.4 ամփոփում է հատատեղերին վերաբերող բոլոր փաստաթղթերը և դրանք ներկայացնում Մասնաճյուղի ավագ անտառապետին,

2.1.5 ապահովում է հատատեղի շահագործման ընթացքում աշխատողների անվտանգության և առողջության պահպանությանն ուղղված աշխատանքների կազմակերպումը,

2.1.6 ապահովում է հատատեղերում անվտանգային տեխնիկական պայմանների պահպանումը,

2.1.7 ապահովում է անտառպետության անտառօգտագործման բոլոր տեսակների, անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքների պատշաճ կատարումը,

2.1.8 հսկողություն է իրականացնում Մասնաճյուղի տարածքում գտնվող և օգտագործման իրավունքով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրամադրված հողամասերը վերջիններիս կողմից ըստ նպատակային նշանակության օգտագործման նկատմամբ,
2.1.9. հսկողություն է իրականացնում անտառօգտագործման, հատատեղերի ճիշտ շահագործման գործընթացի, ինչպես նաև կողմնակի անտառօգտագործման նկատմամբ,
2.1.10. կազմակերպում է անտառպետության անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքները, կազմում է աշխատանքների կատարման կարգագրերը և դրանք ներկայացնում ավագ անտառապետին,
2.1.11. կազմակերպում ու պատասխանատվություն է կրում անտառպետության տարածքում անտառտնտեսական ճանապարհների կառուցման և նորոգման աշխատանքների համար,
2.1.12. անտառպետության տարածքում վնասատուների և հիվանդությունների հայտնաբերման դեպքում անմիջապես տեղեկացնում է ավագ անտառապետին,
2.1.13. անտառպետության սահմաններում մասնակցում է անտառային հրդեհների մարման աշխատանքներին՝ մինչև համապատասխան ուժերի ներգրավումը,
2.1.14. սահմանում է հսկողություն անտառպետության տարածքում անտառօգտագործողների կողմից սահմանված կարգով բնափայտի մթերման և փայտանյութի բացթողնման գործընթացի, ինչպես նաև նրանց կողմից հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ,
2.1.15. մասնակցում է տվյալ անտառպետությունում անտառշինական ու նախագծա-հետազոտական աշխատանքների կատարմանը և ներկայացնում է առաջարկություններ դրանց կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ,
2.1.16. մասնակցում է Մասնաճյուղի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման գործընթացին:

2.2 Իրավունքները՝

2.2.1. ղեկավարությունից ստանալ շահագործվող սարքերի և սարքավորումների տեխնիկական անձնագրերն ու շահագործման հրահանգները՝ աշխատողների անվտանգության ապահովմանն ու առողջության պահպանմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու համար,
2.2.2. հանդես գալ աշխատանքի ժամանակավոր դադարեցման պահանջով, եթե աշխատողը չի ծանոթացել աշխատանքի անվտանգ կատարման կանոններին,
2.2.3. դադարեցնել աշխատանքը հատատեղում, եթե եղանակային անբարենպաստ կամ այլ պայմաններով պայմանավորված առաջացել է աշխատանքի անվտանգության ապահովման կամ աշխատողի առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակ, ինչպես նաև աշխատանքի միջոցի անսարքության կամ վթարային վիճակ,
2.2.4. ծանոթանալ իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին, Կազմակերպության ներքին կարգապահական կանոններին,
2.2.5. ստանալ իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, տեղեկություններ և նյութեր,
2.2.6. տեղեկանքներ, զեկուցագրեր, հաշվետվություններ և միջնորդագրեր պատրաստելու նպատակով պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն Մասնաճյուղի այլ աշխատակիցներից,

2.2.7. Մասնաճյուղի այլ աշխատակիցներից պահանջել և ստանալ իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր,
2.2.8. օգտվել ամենամյա վճարովի նվազագույն 20 աշխատանքային օր արձակուրդից,
2.2.9. պահանջել աշխատանքային գործունեության ընթացքում իր խախտված իրավունքների վերականգնում,
2.2.10. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

2.3 Պարտականությունները՝

2.3.1. տիրապետել հատատեղերում օգտագործվող սարքավորումների տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալներին, աշխատանքների անվտանգ անցկացման պահանջներին և հսկողության կանոններին ու միջոցներին,
2.3.2. հատատեղերում աշխատանքները սկսելուց առաջ աշխատողին ստորագրությամբ հրանագավորել աշխատանքի անվտանգության ապահովման կանոնների մասին,
2.3.3. կազմել և լրացնել աշխատակիցների հրահանգավորումների անցկացման մատյանը,
2.3.4. բարեխղճորեն կատարել պաշտոնի նկարագրով սահմանված իր աշխատանքային պարտականությունները,
2.3.5. պահպանել Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
2.3.6. իր աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում կատարել Մասնաճյուղի ղեկավարի, ավագ անտառապետի գրավոր կամ բանավոր կարգադրությունները, հանձնարարականները և ցուցումները, որոնք մտնում են իր աշխատանքային պարտականությունների մեջ
2.3.7. աշխատանքային օրվա ընթացքում աշխատաժամանակն օգտագործել իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման նպատակով և չկատարել իր աշխատանքային պարտականություններից շեղվող՝ իրեն չհանձնարարված այլ աշխատանք,
2.3.8. լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր պատճառով կամ իր մեղքով Մասնաճյուղին և/կամ պետությանը պատճառված վնասի համար: Աշխատողի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասի հատուցման պարտականությունները չկատարելու համար:
2.3.9. պատասխանատվություն է կրում պաշտոնի նկարագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) համար՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. ՊԱՇՏՈՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1 Կրթություն, աշխատանքային ստաժ, փորձ աշխատանքի բնագավառում

Բարձրագույն կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն և 1 տարվա անտառային տնտեսության, գյուղատնտեսության ոլորտներից մեկում

աշխատանքային ստաժ կամ միջնակարգ կրթություն և 3 տարվա անտառային տնտեսության, գյուղատնտեսության ոլորտներից մեկում աշխատանքային ստաժ:
Համակարգչով և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու կարողություն:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Պաշտոնի նկարագրով գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:
Իմանալ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության հարցերին վերաբերող օրենսդրական, նորմատիվ-իրավական ակտերը և մեթոդական նյութերը: